



05 Մեպտեմբերի, 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԵՎ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ
ՊԱՐՈՆ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան,

26.08.2011թ. հերթական դժբախտ դեպքն է տեղի ունեցել՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Եղնիկներ» գործառնական ծեծի ու խոշտանգման հետևանքով մահացել է ժամկետային զինվորական ծառայող 18-ամյա Ադասի Աբրահամյանը: Զինծառայողը մահացել է ոչ թե հանուն հայրենիքի մարտնչելիս, այլ ընդամենը խաղաղ պայմաններում իր սահմանադրական պարտքը կատարելիս:

Այս և նման դեպքերը ազդանշան են Ձեր, ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների, Մարդու իրավունքների պաշտպանի համար, պետք է անհապաղ արձագանքել և հանդես գալ արտահերթ հրապարակային զեկույցով, Ազգային ժողովի կողմից կազմակերպվի հասարակական լսումներ՝ ստեղծված իրավիճակը գնահատելու և, գործնական առաջարկներ ընդունելու, այնուհետև՝ իրականացնելու: Ավաղ, ոչ մի կառույց չարձագանքեց:

Որպես իրավապաշտպան հասարակական կազմակերպության ղեկավար, խորապես մտահոգված լինելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերում (ՀՀ բանակում) այսօր տիրող իրավիճակի խնդրով, արձանագրում եմ, որ մեր բանակում տիրում է բարոյալքությունն ու անպատժելիության մթնոլորտը:

Մտահոգված լինելով մեր հայ երիտասարդների բարոյական նկարագրի ձևավորման խնդրով, միաժամանակ չեմ կարող չնշել, որ ՀՀ իշխանությունների ներկայացուցիչների կողմից ավելորդ է բարձր ամբիոններից խոսել Հայաստանում քաղաքացիական հասարակության կառուցման և ժողովրդավարության հաստատման, մարդու իրավունքների գերակայության մասին, քանի դեռ ՀՀ բանակում տիրում են ծեծն ու խոշտանգումը, սպանությունները և ինքնասպանության դրդրման դեպքերը, անպատժելիության մթնոլորտը:

Ինձ համար անչափ կարևոր է Հայաստանի զինված ուժերի և հայ զինվորի բարոյական բարձր վարկը հասարակության շրջանում: Հայ մայրերը պետք է վստահ լինեն հայկական բանակում ծառայող իրենց որդիների կյանքի անվտանգությամբ և հպարտանան Հայրենիքի հանդեպ սուրբ պարտքը կատարող իրենց զավակներով, սակայն տեղի է ունենում ուղիղ հակառակը, նրանք կորցրել են իրենց հույսն ու հավատը պետության առջև:

Կարծում եմ, սա միայն ՀՀ պաշտպանության նախարարության խնդիրը չէ, որը յուրաքանչյուր տարի ժամկետային զինծառայողների քանակը լրացնելու հետևից ընկնելով, ՀՀ բանակը /զինված ուժերը/ համալրում է ոչ միայն առողջ երիտասարդներով, այլ նաև ֆիզիկական և հոգեկան շեղումներ, հաճախ քրեորեն պատժելի հակումներ ունեցող քաղաքացիներով: Միայն սրանով կարելի է բացատրել այն դաժանությունը, որը բերեց 18-ամյա երիտասարդի մահվան:

Որպես կանոն, զինված ուժերում ոչ կանոնադրական հարաբերությունների հետևանքով հերթական զինծառայողի մահվան դեպքից հետո ՀՀ պաշտպանության նախարարը հանդես է գալիս ելույթով և հավաստիացնում, որ այդպիսի դեպք այլևս չի կրկնվի կամ քննությունը կբացահայտի: Միևնույն ժամանակ էլ ավելացնում է, որ բանակում իրականացվում են կրթական, դաստիարակչական, բարոյահոգեբանական առողջացման երկարաժամկետ ծրագրեր և այլն: Բայց չգիտես, թե ինչու գործնականում իրենց սահմանադրական պարտքը կատարող մեր հայրենակիցները շարունակում են գոհվել խաղաղ պայմաններում /իր զինակցի գոհն է դառնում:/

Շատ հաճախ նշվում է պոտենցիալ հակառակորդի նկատմամբ մեր ազգային զինված ուժերի բարոյական մակարդակի գերազանց վիճակում լինելը, սակայն ավելորդ չէր լինի մի պահ մեզ դնելնք այն ծնողների տեղը, ում որդիները մահացել են խաղաղ պայմաններում իրենց սահմանադրական պարտքը

կատարելիս: Եթե կոչ է արվում մեր քաղաքացիներին պաշտպանել իր Հայրենիքը, կարող ենք արդյո՞ք, նայելով այդ երիտասարդների ծնողների աչքերի մեջ և երաշխավորել նրանց զավակների անվտանգությունը խաղաղ պայմաններում... իհարկե՝ ոչ: Կործում են, որ այլևս ամպագորգոռ հայտարարություններ անելու ժամանակը չէ, գործուն քայլեր են պետք իրականացնել:

Ակնհայտ է, որ նախարարություններն ու գերատեսչությունները, ինչպես նաև իրավապահ մարմինները, որոնք իրականացնում են երիտասարդական ծրագրեր և քաղաքականություն, գործնականում շատ հեռու են երիտասարդական շրջանում հայրենասիրական և հումանիտական գաղափարներ ձևավորելուց: Ավելին, մեր առօրյա իրականությունն ամենթողության օրինակն է ծառայում գալիք սերնդի համար: Արդյո՞ք ժամանակը չէ, որպեսզի ՀՀ պետական իրավասու մարմինները բազմակողմանի քննության և վերլուծության ենթարկեն ստեղծված իրավիճակը:

Առաջնորդվելով ազգային անվտանգության գերակայության սկզբունքով, բայց միևնույն ժամանակ հիմք ընդունելով մեր հասարակության դժգոհությունը և սպանված զինծառայողների ծնողների արդարացի պահանջները, ես անհրաժեշտ եմ համարում անմիջականորեն դիմել Ձեզ, առաջարկելով.

1. Գործուն միջոցներ ձեռնարկել զինված ուժերի շարքերում ոչ կանոնադրական հարաբերությունները և ոչ առողջ մթնոլորտը վերացնելու ուղղությամբ, անհրաժեշտ է, որպեսզի սույն հիմնախնդիրը քննարկման առարկա դարձվի իշխանության բոլոր ճյուղերում՝ լայն հասարակայնության ներգրավմամբ, հարկ եղած դեպքում հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ:

2. Իրականացնել 1994թ. մինչև օրս ՀՀ բանակում սպանված կամ ինքնասպանություն գործած զինծառայողների բոլոր դեպքերի և քրեական գործերի վարույթների մանրակրկիտ ուսումնասիրություն, նպատակը՝ վեր հանելու այն բացթողումներն ու օրինախախտումները, որոնք թույլ են տրվել նախաքննություն և դատաքննություն իրականացնող մարմինների կողմից, այդ նպատակով ստեղծել հատուկ հանձնաժողով, որտեղ ընդգրկված կլինեն անկախ փորձագետներ և շահագրգիռ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

3. Ենթարկել քրեական պատասխանատվության բոլոր այն պաշտոնատար անձանց, անկախ նրանց զբաղեցրած պաշտոնից և կոչումից, որոնք անմիջական պատասխանատվություն են կրել այդ քրեական գործերի քննության ընթացքի և ավարտի համար, սակայն թույլ են տվել օրինախախտումներ:

4. Հանձնարարել ՀՀ բոլոր նախարարություններին¹՝ ՀՀ Առաքելական եկեղեցու և շահագրգիռ հասարակայնության հետ համատեղ մինչև 2011թ. սեպտեմբերի 30-ը նախապատրաստել ՀՀ բանակում տիրող անառողջ մթնոլորտը վերացնելու և զինվորական ծառայողների մոտ պետության քաղաքացու գիտակցություն ձևավորելու համալիր գործողությունների ծրագիր: Նշված ծրագրի մշակումն ու իրականացումը պետք է կրի շարունակական բնույթ, որի իրականացման աշխատանքներին պետք է մասնակցեն բարձրորակ և հմուտ փորձագետներ և մասնագետներ:

5. Անհրաժեշտ է նաև, որպեսզի ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր տարի մշակի և իրականացնի ՀՀ բանակի պետական քաղաքականության ռազմավարությունը հաստատելու մասին ծրագիր:

6. ՀՀ կառավարությունն անհապաղ պետք է քննարկման առարկա դարձնի և իր համապատասխան որոշմամբ լուծում տա բանակում խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների ընտանիքներին նյութական (ֆինանսական) փոխհատուցում տրամադրելու առաջնահերթ հարցը:

7. Ցանկալի կլինի որպեսզի ՀՀ պաշտպանության նախարարությունը ձևավորի հոգեբանական փորձագիտական խումբ՝ պարբերաբար զինվորական ծառայողների /անկախ կոչումից/ բարոյահոգեբանական վիճակը գնահատելու համար անցկացնի ուսումնասիրություններ և հետազոտություններ, որոնց արդյունքները պետք է հրապարակվեն:

8. Ելնելով ստեղծված իրավիճակից անհապաղ իրականացնել ատեստացիա սպայական կազմում, մասնավորապես մշակել չափորոշիչներ հրամանատարական կազմում ընդգրկված անձանց ֆիզիկական և հոգեբանական վիճակի վերաբերյալ՝ համաձայն իրենց ստանձնած պաշտոնի:

9. Մոցիալապես անապահով՝ աղքատության ընտանեկակ նպաստառուների ցանկում ընդգրկված քաղաքացիների, մանկատների սաների /գորակոչի ենթակա/ ինչպես նաև քրեական անցյալ ունեցող արական սեռի անձանց համար մշակել զինվորական ծառայության նոր կարգ:

10. Ստեղծել զինծառայողների տեղեկատվական արխիվային բազա, որտեղ յուրաքանչյուր զինծառայողի գործում կլինի բնութագիր՝ տրված իր կրթական հաստատության կողմից /օր. դպրոցից, ԲՈՒՀ-ից, մանկատան, ազատագրկման վայրի տնօրինությունների կողմից/: Այս գործընթացում պետք է ներգրավվեն ՀՀ նախարարություններն ու համապատասխան գերատեսչությունները, ՀՀ ոստիկանությունը:

¹ Այսօր ՀՀ բանակում տիրող աղտոտված բարոյահոգեբանական վիճակի համար իրենց մեղքի բաժինն ունեն նաև ՀՀ կրթության և գիտության, ՀՀ մշակույթի, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունները:

11. Անցկացնել մոնիտորինգ ռազմաբժշկական փորձաքննությունների հանձնաժողովներում ու նրանց կողմից տրված բոլոր եզրակացությունները: Սույն գործընթացում ընդգրկել շահագրգիռ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին:
12. Յուրաքանչյուր ամիս գորամասերում անցկացնել մշակութային և սպորտային միջոցառումներ:
13. Անհրաժեշտություն է առաջանում վերանայել ՀՀ գորամասերում անցկացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագրերն ու պլանները, քանզի պրակտիկան ցույց է տալիս, որ այն դրական արդյունքներ չի տալիս: Բանակում շարունակում է տիրել ոչ տոլերանդությունը /անհանդուրժողականությունը/:
14. Յուրաքանչյուր ամիս կամ եռամսյակը մեկ ստուգումներ իրականացնել գորամասերում ինչպես զինծառայողների, այնպես էլ սպայական կազմի գործողությունները, կանոնադրական հարաբերությունները:
15. ՀՀ պաշտպանության նախարարն ու ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի Բարձրագույն պաշտոնատար անձինք եռամսյակը մեկ հասարակայնությանը հաշվետվություն ներկայացնեն իրենց գործունեության վերաբերյալ, իրենց իսկ կողմից ՀՀ գորամասերում տիրող իրավիճակի և բարոյահոգեբանական մակարդակի բարձրացման ու նրանց հետ տարվող աշխատանքների մասին:

Կարծում եմ, որ վերը թվարկված առաջարկությունների իրագործումը կարող է դառնալ ՀՀ իշխանությունների և շահագրգիռ հասարակայնության միջև այն երկխոսության հիմքը, որը կապահովվի փոխադարձ վստահությունն ու համագործակցությունը մեր պետության ներքին քաղաքականության հիմնախնդիրների համատեղ լուծման գործում:

Հույսով եմ, որ Դուք նույնպես շահագրգռված եք մեր Հանրապետության և հայ ժողովրդի բարձր հեղինակությամբ, և չեք կարող անտարբեր մնալ մեր ազգային բանակի և հայ զինվորի ճակատագրի հանդեպ:

Որքան հնարավոր է սեղմ ժամկետում արձագանքել սույն առաջարկություններին:

ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Գործադիր տնօրեն